ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 8

«24» հունվարի 2020թվական գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԱԿՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԵՎ ԿԻՑ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 30-րդ կետերի, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ և 3-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի «դ» ենթակետի, 48-րդ և 50-րդ կետերի դրույթներով, համաձայն հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1991 թվականի մարտի 21-ի թիվ 4 որոշման , հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Բյուրակն բնակավայրում գտնվող բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը և տան զբաղեցրած ու դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ ենթակետերով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և հիմք ընդունելով քաղաքացի Սամվել Երջանիկի Չոփուրյանի դիմումը՝

Որոշում եմ.

1. Սամվել Երջանիկի Չոփուրյանի սեփականությունը հանդիսացող 0,146996 հեկտար հողմասով 97,62 քառակուսի մետր անշարժ գույքին և 25,08 քառակուսի մետր օժանդակ շինությանը տրամադրել հասցե.

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Ամասիա համայնք, Բյուրակն բնակավայր 13-րդ փողոց, տուն 9:
3. Վերականգնել և ճանաչել Սամվել Երջանիկի Չոփուրյանի /ծնված 1957 թվականի նոյեմբերի 14-ին, անձնագիր՝ AT0365694/, Դարեջան Խաչիկի Մանվելյանի /ծնված 1963 թվականի օգոստոսի 25-ին, անձնագիր՝ AH0256579/, Ժենյա Սամվելի Չոպուրյանի /ծնված 1997 թվականի դեկտեմբերի 13-ին, անձնագիր՝ BA1881753/ և Արայիկ Սամվելի Չոփուրյանի /ծնված 1987 թվականի սեպտեմբերի 13-ին, անձնագիր՝ AM0215948/ համատեղ սեփականության իրավունքը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Բյուրակն բնակավայրի 13-րդ փողոց, տուն 9 հասցեում գտնվող 0,146996 քառակուսի մետր մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 122,7 քառակուսի մետր շենք-շինությունների նկատմամբ:
4. Հողամասի սահմաններն որոշում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

«24» հունվարի 2020 թվական
գյուղ Ամասիա